ատրբէջանեան սովորական մէկ գաւառի («Գանջա») մի մասն է, իսկ «Լեռնային Ղարաբաղը» ինքնավար միութիւն, իր մէջ առնելով Շուշիի եւ յարակից գաւառների հայաբնակ մասերը: Ներկայիս նա էլ հաշուում է 127 հազար ազգաբնակութիւն, որի 90 տոկոսը հայ*): Ուրիշ խօսքով, Լեռնային Ղարաբաղը եւ Գանձակը Ատրբէջանին թողնելով, թողնուել է նրան նաեւ, այժմեան մօտաւոր հաշուով, 200–220 հազարի հասնող բնակչութիւն, որից հայ՝ 140–160 հազար:

Այսպիսով, Շարուր-Նախիջեւանն էլ մէջը հաշուած, Ատրբէջանին է անցել Հայաստանից՝ 17,600 քառ. քմ. տարածութեան հետ միասին՝ մօտ 300 հազարի հասնող ազգաբնակութիւն, դրա կէսից աւելին՝ հայ:

Վրաստանին բաղդատաբար քիչ աւար է ընկել Հայաստանի հողից ու բնակչութիւնից:

Ախալքալաքի գաւառը, որ գերազանցօրէն հայաբնակ է, 1914-ի վիճակագրութեամբ հաշուում էր մօտ 105 հազար բնակիչ, որից հայ՝ 81 հազար (վրացի՝ 6–7 հազար): Բորչալուի գաւառի այն մասն էլ, որ Հայաստանի մէջ պիտի մտնէր իսկապէս, հաշուում էր, 1914-ի տուեալներով կրկին, մօտաւորապէս 65–70 հազար բնակչութիւն: Այդտեղ հայերը թէեւ ոչ բացարձակ, բայց էլի համեմատական մեծամասնութիւն էին կազմում առաջ եւ այժմ էլ կազմում են, հաշուելով մօտ 26–27 հազար: Թէ՛ Ախալքալաքում եւ թէ՛ Հայկական Բորչալուում (Լօռին չհաշուած, հարկաւ) եւս, տեղական վերիվայրումների, ինչպէս նաեւ տաճկական ներխուժման հետեւանքով, զգալիօրէն տուժեց ազգաբնակութիւնը անխտիր, հայ թէ մահմեդական: Հակառակ դրան, այժմ էլ այդ երկու շրջանների համար միասին առած պիտի հաշուել մօտաւորապէս 150–160 հազար բնակչութիւն, որի զգալի մեծամասնութիւնը, աւելի քան 100 հազար, հայ:

Ուրիշ խօսքով, Վրաստանն էլ Հայաստանից բաժին է ստացել 5 հազար քառ. քմ. տարածութիւն եւ 150 հազար բնակչութիւն:

Այսպիսով՝ Տաճկաստանը, Ատրբէջանը եւ Վրաստանը միասին առած՝ Անդրկովկասի հայկական հողերից վերցրել են — միջա մօտաւոր, կլոր հաշուով — 43 հազար քառ. քմ. տարածութեամբ մի ընդարձակ երկրամաս եւ 650–680 հազար բնակչութիւն: Դրանցից մեր անդրկովկասեան հարեւանների մասը կազմում է՝ 22,600 քառ. քմ. տարածութիւն եւ 450 հազար բնակչութիւն, որի ճնշող մեծամասնութիւնը — 260–270 հազարը — հայ:

XII

Հիմա անցնենք բոլշեւիկեան շրջանին:

Ընդունուած է ասել, թէ Հայաստանը խորհրդայնացաւ 1920 թ. դեկտեմբերի 2-ին: Նոյեմբեր 29-ի «բանուորա-գիւղացիական յեղափոխութեան» հէքեաթին չեն հաւատում, ի հարկէ, իրենք՝ այդ հէքեաթը յերիւրողներն իսկ: Աւելի ճիշդ կը լինէր առնել 1921-ի ապրիլ 2-ը, Հայաստանի «երկրորդ խորհրդայնացումը»:

Այդպիսով Հայաստանը Անդրկովկասեան վերջին երկիրն էր, որ վերանուաճուում էր կարմրած Մոսկուայի կողմից: Աւելի ճիշդ կը լինէր առնել 1921-ի ամառը (ճիշդ ամիսը եւ օրը չեմ յիշում), քանի որ մինչ այդ՝ Զանգեզուրը չարունակում էր դուրս մնալ Խորհրդային «դժից» եւ իր ներսում պահել Հայաստանի ինքնուրոյնութեան մնացորդները:

Այս՝ ինչ Հայաստանի խորհրդայնացման վերջին փուլին, աւարտմանն է վերաբերում: Իսկ սկի՞զբը: Դա ոչ թէ 1920 թ. նոյեմբերի վերջին եւ դեկտեմբերի առաջին օրերին էր, այլ ամիսներ առաջ ու սերտ կապ ունէր Ատրբէջանի խորհրդայնացման, ինչպէս նաեւ զալիք քեմալական արշաւանքների հետ: Մայիսեան ըմբոստութիւններն էլ նոյն այդ բոլշեւիկեան նախայարձակման մի օղակն էին կազմում:

1920-ի ամառը արդէն, Ատրբէջանի խորհրդայնացումից անմիջապէս յետոյ, բոլշեւիկացաւ ոչ միայն Ղարաբաղը, այլ եւ, թէեւ կարճ ժամանակով, Զանգեզուրը: Աւելին դեռ, այն միջոցին (յուլիսի վերջ եւ օգոստոսի ըսկիզբ 1920), երբ Հայաստանի հանրապետական զօրքերը Նախիջեւանի դռներն էին ծեծում, եւ

*) 1927-ի դարնան համարի համաձայն՝ ինքնավար Ղարաբաղը ունի 127,000 բնակիչ (1914-ին՝ 180,000), որի 9,000-ը թուրք 1000-ը ռուս, մնացեալը՝ հայ: